# Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ
# 2022 թ.ֆինանսական գործունեության
# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը կազմել է **47,182,641** դրամ: Հաշվի առնելով 2022թ. հունվարի 1-ի դրությամբ **5,227,983** դրամ մնացորդը, ընդհանուր գումարը կազմել է **52,410,624** դրամ:

ԽԱՊԿ-ը 2022թ. ընթացքում ստացել է դրամաշնորհներ՝ Հանուն ժողովրդավարության ազգային հիմնադրամից (NED, ԱՄՆ) - 35,170,641 դրամ, Նիդեռլանդների թագավորության դեսպանատնից - 12,000,000 դրամ: Նաև հավաքվել են անդամավճարներ – 12,000 դրամ՝ կանոնադրական ծախսերի համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ծախսվել է **48,187,685** դրամ, որից.

1. «ԶԼՄ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրության կատարելագործում և խոսքի ազատության պաշտպանություն», ծրագրի դոնոր՝ NED, ԱՄՆ - 11,293,112 դրամ
2. «Լրատվամիջոցների բարեփոխումների ջատագովություն Հայաստանում», ծրագրի դոնոր՝ NED, ԱՄՆ – 25,018,147 դրամ:
3. «Դատական գործեր՝ կապված լրատվամիջոցների հրապարակումներում վիրավորանքի և զրպարտության հետ», ծրագրի դոնոր՝ Նիդեռլանդների թագավորության դեսպանատուն – 11,844,426 դրամ:
4. Կազմակերպության կանոնադրական ծախսեր – 32,000 դրամ:

Դրամաշնորհ տրամադրած կազմակերպությունների հետ համագործակցության պայմաններին համապատասխան՝ նրանց ժամանակին ներկայացվել է ծրագրերի և ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը: Բոլոր եկամուտները և ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են ԽԱՊԿ-ի հաշվապահությունում:

2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է **4,222,939** դրամ:

Նախագահ՝ Ա.Մելիքյան

Հաշվապահ՝ Ա.Պողոսյան

Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝ Ա.Պապյան